

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարերի պատասխանները

Ճիշատ

1. Տողերի հեղինակը Մեսրոպ Մաշտոցի կրտսեր աշակերտ Երանելի Կորյունն է. այս տողերով նա բնութագրում է իր հանճարեղ ուսուցչին: Կորյունը կաթողիկոսական տեղապահ Հովսեփից պատվեր է ստանում գրելու Մաշտոցի կենսագրությունը՝ «Վարք Մաշտոցի» երկը, որը 5-րդ դարի հայ վարքագրության գլուխգործոցներից է և միաժամանակ հստակ պատկերացում է տալիս 5-րդ դարում Հայոց աշխարհում ծավալված մտավոր ուքաղաքական գործընթացների մասին: Շրջասույթներ՝ Առաջին հայ ուսուցիչ, հայերենի առաջին ուսուցիչ, գրի հսկա, ուսուցանող Հայոց աշխարհի, Օշականի սուրբ ննջեցյալ:

Մաշտոցի կերպարին անդրադարձել են գրողներ, բանաստեղծներ, երաժիշտներ, նկարիչներ, քանդակագործներ:

Հանրահայտ են Սիամանթոյի, Պարույր Սևակի պոեմները, Շիրազի,

Կապուտիկյանի, Դաշտենցի, տիգրան Պողոսյանի և այլոց բանաստեղծությունները,

Դերենիկ Դեմիրճյանի «Մեսրոպ Մաշտոց» վեպը: Պարույր Սևակը իր «Եվ այր մի՛

Մաշտոց անուն» պոեմում հանճարեղ ընդհանրացում է անում. *Ծնվեց, որ ծնվենք, Եղավ, որ լինենք, Եվ անմահացավ, որ անմահանանք:*

Նրա անունով են կոչվում Երևանի Մատենադարանը, դպրոցներ, պողոտաներ, փողոցներ, 2005 թվականին կառուցվել է տառերի պուրակը (ճարտարապետ՝ Զիմ Թորոսյան), 1962-ին Մատենադարանի առջև տեղադրվում է Մեսրոպ Մաշտոցի արձանը (քանդակագործ՝ Ղուկաս Զուբարյան):

2. Հայրենապաշտ այրը Քերթողահայր Մովսես Խորենացին էր, որի «Հայոց պատմությունը» դարձավ մեր ժողովրդի ծննդյան վկայականը: Նա առաջինն էր Ոսկեդարի պատմիչների մեջ, որ գրեց մեր ժողովրդի ծագման, անցած ճանապարհի և պատմական դերի մասին: Խորենացին «Հայոց պատմությունը» գրել է մարզպան Սահակ Բագրատունու պատվերով: Խորենացին պատմությունն սկսել է գրել, երբ Եզնիկ Կողբացու մահից հետո դարձել է Կողբի եպիսկոպոս (481-484թթ.): Գիրքը բաղկացած է 3 մասից՝ Հայոց մեծերի ծննդաբանությունը, Միջին պատմություն մեր նախնիների, Մեր հայրենիքի պատմության ավարտը, և «Ողբը» հավելվածից:

«Հայոց պատմության» դասերն են՝ հայ ժողովրդի ծագումը և նրա կատարած փառավոր գործերի բացահայտումը:

Զերծ մնալ ազգային սնապարծությունից. հայ ժողովուրդը պետք է կայանա իբրև պետական հզոր, առաքինի ու կիրթ ազգ. Խորենացու շնորհիվ հայ ազգը ձեռք է բերում իքնաճանաչում և ինքնագիտակցություն:

Քաջերի սերունդները քաջեր են:

Քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կտրում է, այնքան էլ գրավում է:

Մահկանացուների ժամանակը կարճ է և անհայտ:

3. Հայոց Մովսէս պատվանունով գրողը հայ երգիծաբանության ազգային դպրոցի հիմնադիր Հակոբ Պարոնյանն է: նա հայտնի է նաև խոսքի Ռոբեսպիեր պատվանունով: Պարոնյանը գրել է մանրապատումների, դիմանկարների, զրույցների, երկխոսությունների ամբողջական շարքեր, թատերգություններ, հրապարակախոսական հոդվածներ է այլն:

Նրա թատերգություններից առավել հայտնի են «Երկու տերով ծառա մը», «Ատամնաբույժն արևելյան», «Պաղտասար աղբար» կատակերգությունները:

Հրաշալի է «Կամիթներ» երգիծապատումների շարքը, որտեղ մեծ երգիծաբանը, իրեն հատուկ գրոտեսկով, բոլոր պատերազմների, աշխարհում տիրող քաոսի ու դժբախտությունների պատճառը համարում է ոսկին:

Սակայն Պարոնյանի գլուխգործոցը նրա «Մեծապատիվ մուրացկաններ» մենագրական վեպն է, որտեղ Պարոնյանը, հավատարիմ իր գրական սկզբունքին՝ «Ես ծիծաղով կուզեմ կրթիլ», ներկայացնում է 19-րդ դարավերջի մամուլի, մտավորականության, գրականության նկատմամբ ազգային մեծատունների սարսափելի անտարբերությունը: «Մենք սույն գործը կհրատարակենք ոչ այնքան մեղադրելու նպատակով ազգային խմբագիրներն, հեղինակներն, բանաստեղծներն և այլն, որքան ներկայացնելու համար ապագա սերնդյան ժամանակիս գրական մարդոց ողբալի կացությունն և գրականության մասին ազգային մեծատուններու սարսափելի անտարբերությունը»:

4. Րաֆֆին (Հակոբ Մելիք- Հակոբյան) 19-րդ դարի հայ ազատագրական պայքարի փողհարն է, հայրենիքի ազատությամբ խանդավառ երիտասարդների գաղափարական կնքահայրը: Նա ազատագրական պայքարի իր ծրագիրը ներկայացրել է «Ջալալեդդին», «Խենթը», «Կայծեր» վեպերում: Այս վեպերի հերոսների կերպարներով են դաստիարակվել հատկապես գավառացի երիտասարդները, ֆիդայիները, որոնք անձնագրի գնացին կռվելու՝ հավատալով իրենց պայքարի հաղթանակին: Նրանց՝ Արաբոյի, Աղբյուր Սերոբի, Հրայր Դժոխքի, Նիկոլ Դումանի, Անդրանիկի, Նժդեհի և հարյուրավոր անձնուրաց հերոսների սխրանքը կրկնեցին հայոց երկրորդ Ավարայրի ճակատամարտի հերոսները՝ Մովսես Սիլիկյան, Դանիելբեկ և Պողոսբեկ Փիրումյաններ, Արամ Մանուկյան, Գարեգին Հովսեփյան, Դրո և այլք: Եվ այսօր էլ Արցախի նվիրական հողում կանգնած են այն հայորդիները, որոնք յուրացրել են իրենց սիրելի հերոսների դասերը: Նրանք էլ քաջ Մախլուտոյի նման ծածանելու են հայոց եռագույնը «Արարատի լույս կատարին», քանի որ հերթը հիմա նրանցն է ու նրանց է տրված հերոսանալու այս պատմական պահը: